

	Վարչության 2024թ. հունիսի 27-ի թիվ 01/046-262 Լ որոշում	Էջ 1 / 13
	ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ	Խմբագրություն: 9
		Ուժի մեջ է՝ 08.07.2024թ.

Վարկատեսակ՝ վարկ, վարկային գիծ

I	Վարկառու	Միկրո, փոքր և միջին բիզնես գործունեություն իրականացնող ՀՀ ռեզիդենտ Իրավաբանական անձ, Անհատ ձեռնարկատեր			
1	Ռեսուրս	Բանիկի սեփական ռեսուրս		Ծրագրային ֆինանսավորմամբ	
2	Նպատակ	Շրջանառու միջոցների ձեռքբերում	Հիմնական միջոցների ձեռքբերում / կապիտալ ներդրումների իրականացում, կրեդիտորական պարտքի մարում / վարկերի վերաֆինանսավորում այլ ֆինանսական կառույցներից, մեկից ավել նպատակով ֆինանսավորում	Շրջանառու միջոցների ձեռքբերում	Հիմնական միջոցների ձեռքբերում / կապիտալ ներդրումների իրականացում կրեդիտորական պարտքի մարում / վարկերի վերաֆինանսավորում այլ ֆինանսական կառույցներից, մեկից ավել նպատակով ֆինանսավորում
3	Արժույթ	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո, ՌԴ ռուբլի		ՀՀ դրամ	
4	Նվազագույն գումար (ՀՀ դրամ կամ	5 100 000	5 100 000	5 100 000	

	Վարչության 2024թ. հունիսի 27-ի թիվ 01/046-262 L որոշում	Էջ 2 / 13
	ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ	Խմբագրություն: 9
		Ուժի մեջ է՝ 08.07.2024թ.

	համարժեք արտարժույթ)				
5*	Առավելագույն գումար (<< դրամ կամ համարժեք արտարժույթ)*	500 000 000	1 000 000 000	160 000 000	5000 000 եվրոյին համարժեք
6	Ժամկետ**	Առավելագույնը 60 ամիս	Առավելագույնը 180 ամիս	Առավելագույնը 60 ամիս	Առավելագույնը 84 ամիս
	Ընդ որում՝ միայն դրամական միջոցների և/կամ Բանկի կողմից թողարկած պարտատոմսերի ապահովվածության դեպքում	անսահմանափակ			
		պատատումների դեպքում՝ ոչ ավելի քան դրա ժամկետը			
7***	Տոկոսադրույք ***	Ընդհանուր սկզբունքով վարկերի/վարկային գծերի դեպքում՝ Պայմանագրային			

	Վարչության 2024թ. հունիսի 27-ի թիվ 01/046-262 L որոշում	Էջ 3 / 13
	ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ	Խմբագրություն: 9
		Ուժի մեջ է՝ 08.07.2024թ.

	Ստանդարտացված պայմաններով վարկերի/վարկային գծերի դեպքում՝ համաձայն Հավելված 1-ի				
ընդ որում՝ միայն դրամական միջոցների և/կամ Բանկի կողմից թողարկած պարտատոմսերի ապահովվածության դեպքում՝	մինչև 3 ամիս	3-9 ամիս	9-12 ամիս	12 ամսից ավել	–
նույնանուն արժույթ	ավանդի տոկոս (այդ թվում պարտատոմսի եկամտաբերության տոկոս) + 2.5%				
տարանուն արժույթ՝ վարկը ՀՀ դրամ, գրավը արտարժույթ	ավանդի տոկոս (այդ թվում պարտատոմսի եկամտաբերության տոկոս) + 5%	ավանդի տոկոս (այդ թվում պարտատոմսի եկամտաբերության տոկոս) + 5.5%	ավանդի տոկոս (այդ թվում պարտատոմսի եկամտաբերության տոկոս) + 6%	–	
տարանուն արժույթ՝ վարկը արտարժույթ, գրավը ՀՀ դրամ	ավանդի տոկոս (այդ թվում պարտատոմսի եկամտաբերության տոկոս) + 0%	ավանդի տոկոս (այդ թվում պարտատոմսի եկամտաբերության տոկոս) + 1.5%	ավանդի տոկոս (այդ թվում պարտատոմսի եկամտաբերության տոկոս) + 2.25%	–	

	Վարչության 2024թ. հունիսի 27-ի թիվ 01/046-262 L որոշում	Էջ 4 / 13
	ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ	Խմբագրություն: 9
		Ուժի մեջ է՝ 08.07.2024թ.

	տարանուն արժույթ՝ վարկը արտարժույթ, գրավը արտարժույթ	որոշվում է Բանկի կոլեգիալ մարմնի կողմից	
8	Վարկ-գրավի առավելագույն հարաբերակցություն	<u>Հավելված 2</u>	
9	Դիմում-հայտի ուսումնասիրության վճար Վճարման կարգը՝ հայտի ընդունման պահին	պայմանագրային՝ 5.1- 100.0մլն ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ պայմանագրային գումարի դեպքում 5 000 ՀՀ դրամ	
		պայմանագրային՝ 100 000 001 -300 000 000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ պայմանագրային գումարի դեպքում min 15 000 ՀՀ դրամ	
		պայմանագրային՝ 300 000 000-ից ավել ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ պայմանագրային գումարի դեպքում, min 30 000 ՀՀ դրամ	
9	ընդ որում՝ միայն դրամական միջոցների և/կամ Բանկի կողմից թողարկած պարտատոմսերի ապահովվածության դեպքում (գանձվում է յուրաքանչյուր	5 000 ՀՀ դրամ	չի գանձվում

	Վարչության 2024թ. հունիսի 27-ի թիվ 01/046-262 L որոշում	Էջ 5 / 13
	ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ	Խմբագրություն: 9
		Ուժի մեջ է՝ 08.07.2024թ.

	վարկային գործիքի համար՝		
10***** *	Տրամադրման միջնորդավճար՝ վարկի դեպքում՝ գանձվում է տրամադրման պահին, իսկ վարկային գծի դեպքում՝ ծրագրային ձևակերպման պահին և վաղաժամկետ մարման դեպքում վերադարձման ենթակա չէ	պայմանագրային ՝ վարկի գումարի 0.5%, բայց min 20,000 ՀՀ դրամ max 600,000 ՀՀ դրամ	պայմանագրային միանվագ՝ min 20,000 ՀՀ դրամ, max 100,000 ՀՀ դրամ
	ընդ որում՝ միայն դրամական միջոցների և/կամ Բանկի կողմից թողարկած պարտատոմսերի	չի գանձվում	չի գանձվում

	Վարչության 2024թ. հունիսի 27-ի թիվ 01/046-262 L որոշում	Էջ 6 / 13
	ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ	Խմբագրություն: 9
		Ուժի մեջ է՝ 08.07.2024թ.

	ապահովվածության դեպքում՝		
11	Տոկոսագումարների մարումներ	ամսական	
		վարկը ձևակերպելու պահին	
		վարկավորման ժամկետի ավարտին՝ միայն դրամական միջոցների և Բանկի կողմից թողարկած պարտատոմսերի ապահովվածության դեպքում	
12	Մայր գումարի մարումներ	Անուիտետային, զսպանակաձև, հաճախորդի հայեցողությամբ/կախված հաճախորդի գործունեության տեսակի առանձնահատկությունից ճկուն, սակայն մարումների գրաֆիկում պետք է լինի նվազագույնը 3 ամիս մայր գումարի	Անուիտետային, զսպանակաձև, հաճախորդի հայեցողությամբ/կախված հաճախորդի գործունեության տեսակի առանձնահատկությունից ճկուն, սակայն մարումների գրաֆիկում պետք է լինի նվազագույնը 3 ամիս մայր գումարի
13	Վարկային գծի գումարի նվազեցումներ	նվազագույնը՝ վերջին 6 ամսում	նվազագույնը՝ սկսած վարկի մարման 4-րդ տարվանից
		հաճախորդի հայեցողությամբ/կախված հաճախորդի գործունեության տեսակի առանձնահատկությունից՝ առավելագույն արտոնյալ ժամկետ՝ 12 ամիս	
14	Վարկային գծի չօգտագործված մասի	min 1%	

	Վարչության 2024թ. հունիսի 27-ի թիվ 01/046-262 L որոշում	Էջ 7 / 13
	ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ	Խմբագրություն: 9
		Ուժի մեջ է՝ 08.07.2024թ.

	տարեկան տոկոսադրույք			
15	Տրամադրման եղանակ	անկանխիկ		
16	Վարկառուի բանկային հաշվի առկայություն	պարտադիր		
17	Օգտագործման եղանակ	Մինև 30 000 000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթով	30 000 001 -ից մինև 200 000 000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթով	200 000 001 -ից ավել ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթով
		անկանխիկ/ կանխիկ (Բանկի որոշմամբ մինչև 80%)	անկանխիկ/ կանխիկ (Բանկի որոշմամբ մինչև 60%)	անկանխիկ/ կանխիկ (Բանկի որոշմամբ մինչև 40%)
18	Գումարի կանխիկացում	Համաձայն Բանկի գործող սակագների		
19	Վարկառուին, գրավատուին, երաշխավորին ներկայացվող պահանջներ	ներկայացված է Հավելված 3		

	Վարչության 2024թ. հունիսի 27-ի թիվ 01/046-262 Լ որոշում	Էջ 8 / 13
	ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ	Խմբագրություն: 9
		Ուժի մեջ է՝ 08.07.2024թ.

20	Վարկի, վարկային գծի վերադարձելիության ապահովվածություն	ներկայացված է Հավելված 2
21	Տույժեր, տուգանքներ	ներկայացված է Հավելված 4
22	Ապահովագրություն	Բանկի պահանջով
23	Բանկային հաշվի բացում	Համաձայն Բանկի սակագների
24	Այլ դրույթներ	ներկայացված է Հավելված 5
25	Վերաֆինանսավորվող վարկին ներկայացվող պահանջներ	Որոշ դեպքերում վերաֆինանսավորումը հնարավոր է իրականացնել վարկառուի, գրավատուի/ների, ինչպես նաև գրավի առարկայի համասեփականատերերի երաշխավորությամբ գրավի առարկաների հետագա ձևակերպման նախապայմանով (մինչև 45 օր ժամկետով)
26	Սահմանաչափ	Սահմանաչափի գործողության առավելագույն ժամկետ՝ 12 ամիս: Ասահմանաչափի գործողության ժամկետում հաճախորդին կարող են տրամադրվել վարկեր, վարկային գծեր: Վարկային սահմանաչափի տրամադրման համար իրականացվում է ֆինանսատնտեսական վերլուծություն: Սահմանաչափի ներքո տրամադրված յուրաքանչյուր ֆինանսավորման համար իրականացվում է նպատակային օգտագործման ստուգում: Վարկային սահմանաչափի ներքո նոր ֆինանսավորման մերժման համար հիմք է հանդիսանում հաճախորդի վարկային պատմության և վարկային բեռի վատթարացումը՝

	Վարչության 2024թ. հունիսի 27-ի թիվ 01/046-262 L որոշում	Էջ 9 / 13
	ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ	Խմբագրություն: 9
		Ուժի մեջ է՝ 08.07.2024թ.

	Սահմանաչափի ներքո Ֆինանսավորման դիտարկման պահին ՀՀ բանկերում և վարկային կազմակերպություններում վարկի և (կամ) դրա նկատմամբ հաշվարկված տոկոսագումարների մարումների գծով վերջին 12 ամիսների ընթացքում հանրագումարային 30 (երեսուն) օր և ավել ժամկետանց օրերի և հսկվողից խիստ դասով դասակարգման առկայությունը և/կամ Վարկային բեռի ավելացումը՝ եթե Սահմանաչափի գործողության ընթացքում Հաճախորդի վարկային բեռը ավելացել է սահմանաչափի 10% և ավել (հաշվարկում չեն ներառվում Արդշինբանկի ֆինանսավորումները), սահմանաչափի ներքո վարկային գործիքների տրամադրումները դադարեցվում են, բացառությամբ եթե դիտարկվում է տվյալ վարկի/երի վերաֆինանսավորում: Գործող սահմանաչափը ներկայացվում է վերահաստատման՝ կատարելով նոր ֆինանսատնտեսական վերլուծություն կամ համապատասխան ցուցանիշների ճշտումներ: Վարկային սահմանաչափի շրջանակներում վարկերը/վարկային գծերը տրամադրվում են բացառապես գործող կամ նոր կնքվող ֆինանսական գործառնությունների իրականացման գլխավոր պայմանագրի շրջանակներում: Վարկային սահմանաչափի շրջանակներում տրամադրվող յուրաքանչյուր վարկ/ Վարկային գիծ հանդիսանում է առանձին միավոր վարկ/վարկային գիծ, և յուրաքանչյուր վարկի/վարկային գծի գծով կնքվում է համապատասխան վարկային համաձայնագիր: Սահմանաչափի շրջանակներում հաճախորդն իրավունք ունի վերցնել անսահմանափակ քանակի վարկեր, վարկային գծեր՝ պահպանելով առավելագույն վարկային սահմանաչափը:
--	--

* Հաճախորդների դեպքում՝ Հաճախորդի և իր հետ փոխկապակցված անձանց Բանկում ունեցած վարկային բեռի (գործող և դիտարկվող վարկային պարտավորությունների) առավելագույնսահմանաչափ:

** Միայն երաշխավորությամբ և/կամ երաշխավորությամբ և «Արդշինբանկ» ՓԲԸ համակարգում սպասարկվող հաշիվներում շրջանառվող դրամական միջոցներով ապահովվածությամբ վարկերի ժամկետը չի կարող գերազանցել 24 ամիս:

	Վարչության 2024թ. հունիսի 27-ի թիվ 01/046-262 L որոշում	Էջ 10 / 13
	ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ	Խմբագրություն: 9
		Ուժի մեջ է՝ 08.07.2024թ.

*** Արտարժույթային վարկային գործիքի դեպքում փոխարժեքը հավասար է տոկոսագումարների վճարման պահին Բանկում գործող կոմերցիոն փոխարժեքին: Առանձին դեպքերում՝ կախված ձևակերպման առանձնահատկություններից և համաձայնեցնելով հաճախորդի հետ կարող է կիրառվել այլ սակագին:

*****Հայտի ուս վճար, տրամադրման վճար, միանվագ սպասարկման վճար

արտարժույթային վարկային գործիքի դեպքում հաշվարկումը և գանձումը կատարվում է ՀՀ դրամով, փոխարկելու համար հիմք ընդունելով վճարման պահին Բանկում գործող անկանխիկ վաճառքի փոխարժեքը,

Սպասարկման պարբերական վճար՝ Արտարժույթային վարկային գործիքի դեպքում սպասարկման վճարի հաշվեգրումը կատարվում է ՀՀ դրամով փոխարկելու համար հիմք ընդունելով Սպասարկման վճարի մուծման ամսվանը նախորդող ամսվա վերջին աշխատանքային օրվա ավարտին Բանկում գործող անկանխիկ վաճառքի փոխարժեքը:

***** Տոկոսադրույքը մինչև 100 մլն կամ համարժեք արտարժույթով ֆինանսավորումների դեպքում ընտրում է հաճախորդը՝ ստանդարտացված պայմաններով թե ընդհանուր սկզբունքներով հաշվարկի եղանակով

2 Ծրագրային ռեսուրսով տրամադրված ֆինանսավորումները հետագայում Ծրագրի կողմից չվերաֆինանսավորելու/մերժելու կամ վերաֆինանսավորած ֆինանսավորումների վերաֆինանսավորման դադարեցման դեպքում, ռեսուրսը փոխվում է Բանկի սեփական ռեսուրս և տարեկան տոկոսադրույքը բարձրացվում է 4 տոկոսային կետով:

I Հաճախորդների դասերի շնորհումը կատարվում է ըստ Բանկի "Կորպորատիվ հաճախորդների դասակարգման ընթացակարգի"; Սույն պայմանները չեն տարածվում ՀԷԿ վրա:

	Վարչության 2024թ. հունիսի 27-ի թիվ 01/046-262 L որոշում	Էջ 11 / 13
	ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ	Խմբագրություն: 9
		Ուժի մեջ է՝ 08.07.2024թ.

Հաշվարկային դրույքի (ՀԴ) սահմանման, հաշվարկման և փոփոխման կարգ	
ՀՀ դրամ արժույթով տրամադրվող վարկերի համար	ԱՄՆ դոլար արժույթով տրամադրվող վարկերի համար
Հաշվարկային դրույքի (ՀԴ) հաշվարկման հիմք է հանդիսանում 1 տարի ժամկետայնությամբ ՀՀ պետական (գանձապետական) պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերությունը: ՀՀ պետական (գանձապետական) պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերությունների վերաբերյալ տեղեկատվության աղբյուր կարող են հանդիսանալ ՀՀ ԿԲ պաշտոնական կայքի համապատասխան հրապարակումները (եկամտաբերության կոր)՝ հետևյալ հղմամբ՝ https://www.cba.am/am/SitePages/fmofinancialmarkets.aspx: Սույն կետում նշված ինտերնետային հղման փոփոխումը որևէ ազդեցություն կամ հետևանք չի կարող ունենալ սույն կետով սահմանված տոկոսադրույքի փոփոխման վրա: Հաշվարկային դրույքի փոփոխման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը և օգոստոսի 1-ը: Փետրվարի 1-ի համար Հաշվարկային դրույքը հաշվարկվում է որպես նախորդ տարվա հուլիսի 1-ից մինչև նախորդ տարվա դեկտեմբեր 31-ը ընկած ժամանակահատվածի համար համապատասխան դրույքների միջին թվաբանականը: Օգոստոսի 1-ի համար Հաշվարկային դրույքը հաշվարկվում է որպես տվյալ տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ տարվա հունիսի 30-ը ընկած ժամանակահատվածի համար համապատասխան տոկոսադրույքների միջին թվաբանականը: Ոչ աշխատանքային օրերին միջինի հաշվարկում կրկնվում է նախորդ աշխատանքային օրվա տոկոսադրույքը:	Հաշվարկային դրույքի (ՀԴ) հաշվարկման հիմք է հանդիսանում ֆիզիկական անձանցից 1 տարուց ավել ժամկետով ԱՄՆ դոլարով ներգրավված ավանդների տոկոսադրույքները: Ֆիզիկական անձանցից 1 տարուց ավել ժամկետով ԱՄՆ դոլարով ավանդների տոկոսադրույքների վերաբերյալ տեղեկատվության աղբյուր կարող են հանդիսանալ ՀՀ ԿԲ պաշտոնական կայքի համապատասխան հրապարակումները՝ հետևյալ հղմամբ՝ https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx: Սույն կետում նշված ինտերնետային հղման փոփոխումը որևէ ազդեցություն կամ հետևանք չի կարող ունենալ սույն կետով սահմանված տոկոսադրույքի փոփոխման վրա: Հաշվարկային դրույքի փոփոխման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը և օգոստոսի 1-ը: Փետրվարի 1-ի համար Հաշվարկային դրույքը հաշվարկվում է որպես նախորդ տարվա հունիսից մինչև նախորդ տարվա նոյեմբերը ներառյալ ընկած ժամանակահատվածի համար հրապարակված տոկոսադրույքների միջին թվաբանականը: Օգոստոսի 1-ի համար Հաշվարկային դրույքը հաշվարկվում է որպես նախորդ տարվա դեկտեմբերից մինչև տվյալ տարվա մայիսը ներառյալ ընկած ժամանակահատվածի համար հրապարակված տոկոսադրույքների միջին թվաբանականը:

	Վարչության 2024թ. հունիսի 27-ի թիվ 01/046-262 L որոշում	Էջ 12 / 13
	ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ	Խմբագրություն: 9
		Ուժի մեջ է՝ 08.07.2024թ.

Եթե վերոնշյալ ցուցանիշը դառնում է անհասանելի, և անհնարին է դառնում տոկոսադրույքի սահմանումը հաջորդ ժամանակահատվածի համար, ապա տոկոսադրույքը հաջորդ ժամանակահատվածի համար սահմանվում է՝ հիմք ընդունելով Բանկի կողմից սահմանվող երկրորդային ցուցանիշը: Երկրորդային ցուցանիշի հաշվարկման հիմք է հանդիսանում ՀՀ ԿԲ կողմից հրապարակված ֆիզիկական անձանցից մինչև 1 տարի ժամկետով (բացառությամբ ցպահանջ ավանդների) ներգրավված ՀՀ դրամով ավանդների տոկոսադրույքները:

Ֆիզիկական անձանցից մինչև 1 տարի ժամկետով (բացառությամբ ցպահանջ ավանդներ) ներգրավված ՀՀ դրամով ավանդների տոկոսադրույքների վերաբերյալ տեղեկատվության աղբյուր կարող են հանդիսանալ ՀՀ ԿԲ պաշտոնական կայքի համապատասխան հրապարակումները՝ հետևյալ հղմամբ՝ <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>: Սույն կետում նշված ինտերնետային հղման փոփոխումը որևէ ազդեցություն կամ հետևանք չի կարող ունենալ սույն կետով սահմանված տոկոսադրույքի փոփոխման վրա:

Երկրորդային ցուցանիշի փոփոխման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը և օգոստոսի 1-ը:

Փետրվարի 1-ի համար երկրորդային ցուցանիշը հաշվարկվում է որպես նախորդ տարվա հունիսից մինչև նախորդ տարվա նոյեմբերը ներառյալ ընկած ժամանակահատվածի համար հրապարակված տոկոսադրույքների միջին թվաբանականը: Օգոստոսի 1-ի համար երկրորդային ցուցանիշը հաշվարկվում է որպես նախորդ տարվա դեկտեմբերից մինչև տվյալ տարվա մայիսը ներառյալ ընկած ժամանակահատվածի համար հրապարակված տոկոսադրույքների միջին թվաբանականը:

Եթե վերոնշյալ ցուցանիշը դառնում է անհասանելի, և անհնարին է դառնում տոկոսադրույքի սահմանումը հաջորդ ժամանակահատվածի համար, ապա տոկոսադրույքը հաջորդ ժամանակահատվածի համար սահմանվում է՝ հիմք ընդունելով Բանկի կողմից սահմանվող երկրորդային ցուցանիշը:

Երկրորդային ցուցանիշի հաշվարկման հիմք է հանդիսանում ֆիզիկական անձանցից 366 օր ժամկետով (կամ այդ ժամկետը ներառող) առանց ավելացման կամ նվազեցման իրավունքի ԱՄՆ դոլարով ՀՀ առևտրային բանկերի կողմից ներգրավվող ստանդարտ ավանդների տոկոսադրույքները:

Երկրորդային ցուցանիշի փոփոխման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը և օգոստոսի 1-ը:

Փետրվարի 1-ի համար երկրորդային ցուցանիշը սահմանվում է որպես առնվազն տվյալ տարվա հունվարի 15-ի դրությամբ (կամ դրանից հետո մինչև տվյալ տարվա հունվարի 31-ը) առևտրային բանկերի կողմից հրապարակված համապատասխան տոկոսադրույքների միջին մեծությունը: Օգոստոսի 1-ի համար երկրորդային ցուցանիշը սահմանվում է որպես առնվազն տվյալ տարվա հուլիսի 15-ի դրությամբ (կամ դրանից հետո մինչև տվյալ տարվա հուլիսի 31-ը) առևտրային բանկերի կողմից հրապարակված համապատասխան տոկոսադրույքների միջին մեծությունը:

Հաշվարկային դրույքի հաշվարկված մեծությունը կլորացվում է մինչև 50 բազիսային կետ (0.5%-ային կետ, օրինակ՝ 5.50%, 6.0%, 6.5%, 7.0% ... և այլն): Կլորացումը կատարվում է ինչպես պայմանագրի կնքման պահին, այնպես էլ վարկի գործողության ընթացքում տոկոսադրույքի բարձրացման կամ նվազեցման դեպքում:

	Վարչության 2024թ. հունիսի 27-ի թիվ 01/046-262 L որոշում	Էջ 13 / 13
	ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ	Խմբագրություն: 9
		Ուժի մեջ է՝ 08.07.2024թ.

Հաշվարկային դրույքի հաշվարկված մեծությունը կլորացվում է մինչև 50 բազիսային կետ (0.5%-ային կետ, օրինակ՝ 5.50%, 6.0%, 6.5%, 7.0% ... և այլն): Կլորացումը կատարվում է ինչպես պայմանագրի կնքման պահին, այնպես էլ վարկի գործողության ընթացքում տոկոսադրույքի բարձրացման կամ նվազեցման դեպքում:

*ՀէԿԵՐԻ դեպքում գլխավոր պայմանագրի առավելագույն ժամկետը հավասար է վերջինիս վարկավորման պայմաններով սահմանված առավելագույն ժամկետի: